

դանն օրհնեացի» (Խրատ): — Մեր Զ դարու փութկոտ երիցունք՝ ճաշէն յառաջ կը վազէին սփռել իրենց անսպառ օրհնութիւնը մասլից ու պարարտ սաներու վրայ եւս, անոնց միջէն օրհնած բաժին մ'ալ իրենց տանց հանելու համար. եւ զոր կ'արգելու Աշտարակեցւոյն մէկ կանոնն՝ ըսելով. «Քահանայք ի պառտանց օրհնել մի իշխեսցեն երթալ, զի զօշաքաղութիւն է» . այլ շատանալ մատաղի հասութեան օրհնութեամբ (ԻԸ):

Սեղանօրհնէից յօրինուածը ցոյց պիտի տամ վանականաց ճաշի նկարագրին մէջ. անոր համար աւելորդ է մանր յիշել հոս: Միայն դիտել կու տամ՝ թէ հաւանական չի թուիր նոյն կանոնին յետսամուտ ընդարձակութեամբ գործածութիւնն աշխարհիկ ճաշերու մէջ եւս. այլ հոս միշտ պահած է անշուշտ համառօտ ձեւ մը:

16. — Կը բազմին: — Հասած է արդէն «ժամ բազմականացն» (Եղիշ. 132) կամ «ժամ բազմակալացն» (Փաւս. 67). այս ինքն բազմոցաց վրայ նստելու վայրկեանը: Այս տեղ դիտելի երկու բան կայ. բազմելու կարգն ու ձեւը:

Ա. Սեղանն ունի «գրոշխ» (Եղիշ. 132) կամ «գահագրոշխ» մը (Մրկ. ԺԲ, 39. Ոսկ. Մտթ. ի Հյկզ.), որ Հելլենաց մէջ կիսա-